

Համաձայնեցված է  
ՀՀ ֆինանսների նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի նախագահ  
Գ. Խաչատրյան

Վ. Գաբրիելյան

17 մայիսի 2011 թ.  
N 22

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ**

**ԲԱՆԿԵՐՈՒՄ ԲԱՅՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԱԶՈՒՐԿ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՑ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԱՅՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.02.2011թ. «Առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը հաստատելու մասին» N 25-Ն որոշմամբ հաստատված «Առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման» կարգը սահմանում է բանկերի կողմից առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման սահմանափակումները՝ առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը, առարկայագուրկ մետաղական հաշիվներով թույլատրվող գործառնությունները, սահմանափակումները, տեղեկությունների հրապարակումը, ինչպես նաև կարգավորում է առարկայագուրկ մետաղական հաշիվների վարման կապակցությամբ բանկի և հաճախորդի հարաբերությունները: Կարգի պահանջները չեն տարածվում բանկերի կողմից թանկարժեք մետաղների, ոսկերչական իրերի և այլ արժեքների ի պահ ընդունման գործառնությունների վրա:

Կարգի իմաստով առարկայագուրկ մետաղական հաշիվը ցպահանջ կամ ժամկետային հաշիվ է, որը նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ: Մետաղական հաշիվները կարող են բացվել միայն 999.5 կամ 999.9 հարգով: Կարգում օգտագործվող «բանկային ոսկի» և «ոսկու ստանդարտացված ծուլակտոր» հասկացությունները կիրառվում են համապատասխանաբար «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» և «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքներով սահմանված նշանակությամբ: Մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է ՀՀ դրամով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ոսկու համար հայտարարած հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով (0.01 գրամ ճշտությամբ) կամ տրոյական ունցիաներով (0.001 տրոյական ունցիա ճշտությամբ): Կարգի իմաստով մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի:

Մետաղական հաշիվ բացելիս բանկի և հաճախորդի միջև կնքվում է գրավոր պայմանագիր, որը պարունակում է պայմանագրի բոլոր էական պայմանները և ստորագրվում կողմերի կողմից: Այն դեպքում, երբ մետաղական հաշվի պայմանագրով նախատեսվում է հաշվում անկանխիկ ոսկու նվազագույն քանակի առկայություն, ապա մետաղական հաշիվը բացված է համարվում մետաղական հաշիվը համապատասխան չափի անկանխիկ ոսկով համալրելու պահից: Մետաղական հաշվի պայմանագրում առնվազն նշվում են մետաղական հաշիվների գծով թույլատրվող գործառնությունները, մետաղա-

կան հաշիվների մուտքագրման և ելքագրման կարգը, սակագների, իսկ տոկոսների վճարում նախատեսելու դեպքում՝ նաև դրանց հաշվարկման և վճարման (զանձման) կարգը և պայմանները, ինչպես նաև հետևյալ տեղեկատվությունը:

Բանկերը մետաղական հաշիվներով իրականացնում են հետևյալ գործառնությունները (1) մետաղական հաշվի համալրում՝ բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով (2) մետաղական հաշվի համալրում հաճախորդի կամ այլ անձի նույն բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով (3) մետաղական հաշվի ելքագրում՝ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին բանկին վաճառելու միջոցով (4) մետաղական հաշվի ելքագրում՝ հաճախորդի կամ այլ անձի նույն բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով: Բանկերի կողմից մետաղական հաշիվներով չեն կարող իրականացվել նշված գործառնություններից բացի այլ գործառնություններ (այդ թվում՝ մետաղական հաշվի վարկավորում, ինչպես նաև մետաղական հաշիվների համալրում կամ ելքագրում ոչ դրամական միջոցներով (բացառությամբ՝ միջբանկային փոխանցումների, որոնց դեպքում անկանխիկ ոսկով թղթակցային հաշիվների համալրումը կամ ելքագրումը կարող է իրականացվել համապատասխան հարգի բանկային ոսկու կամ ոսկու ստանդարտացված ծուլակտորների միջոցով)): Մետաղական հաշիվները կարող են գրավադրվել:

Մետաղական հաշիվներով գործառնությունները բանկն իրականացնում է հաճախորդի կարգադրության հիման վրա: Առանց հաճախորդի կարգադրության՝ այդ գործառնությունները կարող են իրականացվել դատարանի վճռի հիման վրա, ինչպես նաև օրենքով կամ բանկի և հաճախորդի միջև պայմանագրով նախատեսված դեպքերում:

Մետաղական հաշիվներով *տոկոսների* վճարում նախատեսվելու դեպքում հաշվարկված տոկոսների վճարումն իրականացվում է ԳԳ դրամով՝ վճարման օրվա դրությամբ անկանխիկ ոսկու համար տվյալ բանկի կողմից սահմանված գնանշմանը համապատասխան կամ հաճախորդի ցանկությամբ՝ տվյալ բանկի կողմից այդ օրվա գնանշման համաձայն ավելացվում է հաճախորդի մետաղական հաշվին (միաժամանակ՝ իրականացնելով անկանխիկ ոսկու առք և վաճառք): Բանկերն ամեն օր *վերագնահատում են* մետաղական հաշիվներում (այդ թվում՝ տվյալ բանկի կողմից այլ բանկում բացված մետաղական հաշիվներում) առկա մնացորդային ոսկին՝ տվյալ օրվա համար ոսկու համար ԳԳ կենտրոնական բանկի կողմից հայտարարած հաշվարկային գնով:

Բանկերն առնվազն իրենց ինտերնետային կայքում և բանկի գլխամասում և տարածքային ստորաբաժանումներում (որտեղ մատուցվում են մետաղական հաշիվների բացման կամ սպասարկման ծառայությունները)՝ հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրում են բանկի կողմից սահմանված անկանխիկ ոսկու գնանշումները, ինչպես նաև հրապարակում են մետաղական հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը: Մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Բանկերը մետաղական հաշիվների գծով կատարված անկանխիկ ոսկու առուվաճառքից ստացված եկամուտների և (կամ) ծախսերի՝ հարկային նպատակով ճանաչումն իրականացնում են համապատասխան պետական մարմնի կողմից սահմանված կարգով:

«Շահութահարկի մասին» ԳԳ օրենքի 64-րդ հոդվածին համապատասխան, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին եկամուտներ վճարելիս շահութահարկը պահում (զան-

ծում) է հարկային գործակալը՝ նույն օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված դրույքաչափերով: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետին, 21-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին և 22-րդ հոդվածին համապատասխան, անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս (աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկելիս) եկամտահարկը պահում (գանձում) է հարկային գործակալը՝ նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով, իսկ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով (օրենքի համաձայն հաշվարկված հարկվող եկամտից:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետին, 7-րդ հոդվածի 8-րդ հոդվածին և 11-րդ հոդվածի «դ» ենթակետին համապատասխան հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների), իսկ արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքները օրենքի իմաստով եկամուտ կամ ծախս չեն համարվում: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան ֆիզիկական անձանց արտարժույթով ստացված գումարները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ելնելով դրանց ստացման օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

Արժութային արժեքներ համարվող գույքի տեսակները և արժութային գործարքների բնորոշումը սահմանված է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. Բանկերում բացված մետաղական հաշիվներից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտները տարբերակվում (առանձնացվում) են ըստ տոկոսների և մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման արդյունքների:

2. Բանկերում բացված մետաղական հաշիվներից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին տոկոսների ձևով վճարված եկամուտներից բանկերի կողմից շահութահարկը պահվում (գանձվում) է՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված 10% դրույքաչափով՝ անկախ այդ ոչ ռեզիդենտին մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման արդյունքների:

3. Բանկերում բացված մետաղական հաշիվներից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին տոկոսների ձևով վճարված եկամուտներից բանկերի կողմից եկամտահարկը պահվում (գանձվում) է՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով (եթե եկամուտ ստացող ֆիզիկական անձը հանդիսանում է ՀՀ քաղաքացի) կամ 22-րդ հոդվածի 1-ին կետով (եթե եկամուտ ստացող ֆիզիկական անձը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ) սահմանված 10% դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները և անկախ այդ ֆիզիկական անձի մետաղական հաշիվներում

---

4. Բանկում բացված մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման տարբերությունները հարկման նպատակով չեն ներառվում տվյալ բանկի և այդ հաշիվները տնօրինող կազմակերպությունների (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) եկամուտների և (կամ) ծախսերի մեջ: